













Ղարաքիլիսայից Դիլիջան անցնելու: Զօրավար Նազարբեկեանը, որ ծայրայեղօրէն յուսալքուած էր ու տխուր, մեզ պատասխանում է բառացի. «Ես այլեւս զօրք չունեմ, ինչ կարող էք՝ դուք արեք»: Սրտաբեկ ու տրտում դուրս ենք գալիս զօրավարի մօտից: Մեր ամբողջ յոյսը նրա վրայ էր, իսկ նա էլ այդպէս յուսահատուած էր ու ձեռնթափ: Որոշում ենք փորձել մեր ուժերով ու խօսքով աշխատել գէթ զինուորների փախուստի առաջն առնել: Անգամ խուզարկութիւններ էլ ենք անում սայլերի ու բռնների մէջ, որպէսզի, եթէ ընտանիքները գնում են՝ գնան, բայց գոնէ հրացան, փամփուշտ չտանեն հետները: Եւ այդ մասամբ յաջողում է մեզ... Այդ օրերին Հնդկա-եւրոպական գծի միջոցով ես շարունակ հեռախօսային կապ էի պահպանում Արամի կամ նրա կողմից՝ Արշալոյս Աստուածատրեանի հետ: Սարգարապատի հերոսամարտի նախօրեակին էր... սովորական հարց ու փորձից յետոյ Արամն ինձ ասաց. «Պատրաստուում ենք վճռական ճակատամարտ տալու Սարգարապատի մօտ: Ի սէր Աստուծոյ, գո՛ւէ երեք օր էլ պաշտպանեցէք Ղարաքիլիսայի ճակատը, որ թշնամին իր այդ կողմի ուժերը չբերի մեր վրայ (ընդգծումն իմն է - Ռ. Հ.)»: Իհարկէ, խոստում տուինք, բայց որտեղի՞ց եւ ինչպէ՞ս պաշպանէինք, երբ ո՛չ զինուոր կար, ոչ զօրք»: Իրագեկի վկայութիւնը հաստատում է Ղարաքիլիսայի ճակատամարտի մասնակից կապիտան Ն. Աբազովը<sup>28</sup>:

Ղարաքիլիսայի ճակատամարտի մասին առաջին գրքոյկի հեղինակ եւ դէպքերի մասնակակից Մանուկ Ղազարեանն էլ պնդում է. «Մեր զինուորական յայտնի ուժերը՝ Նազարբեկով, Բէկ Մամիկոնով, Անդրանիկ եւ ուրիշները՝ կորցնելով իրենց հաւասարակշռութիւնը՝ չունէին հմայք ու հեղինակութիւն մասսայի աչ-

քում»<sup>29</sup>:  
 Ինչպէս տեսնում ենք, հայոց զօրքերի գլխաւոր հրամանատարը ամբողջովին հաշտուել էր նահանջելու- դիմադրութիւն ցոյց չը տալու մտքի հետ եւ 1918 թ. մայիսի 22-ին Հայոց Ազգային խորհրդին զեկուցում էր, որ կռուելը անհնար է, որ անհրաժեշտ է նահանջել, քանի որ խուճապ է եւ ոչ ոք չէր ուզում կռուել: Ասել է թէ՛ հրամանատարութիւնը ոչ մի ազդեցութիւն չունէր զօրքի վրայ, այսինքն՝ բարձրագոյն հրամանատարութիւն գոյութիւն չունէր, ո՛չ ոք ո՛չ մէկին չէր ենթարկւում:

Այս իրողութիւններից մեկնելով անվերապահօրէն կարելի է յայտարարել, որ հայ-թուրքական ճակատներից ամենախարխուլն ու բարոյալքուածը Ղարաքիլիսայի ճակատն էր, որովհետեւ եթէ Սարգարապատում եւ Ապարանում պարտուողական տրամադրութիւնները կազմակերպուած նահանջից եւ թշնամու դէմ պայքարը լեռները փոխադրելու մտայնութիւնից այն կողմ չէին անցնում, բանակը կազմալուծուած չէր, իսկ բնակչութիւնը որոշ տեղերում (օրինակ՝ Ապարանում), մինչեւ կանոնաւոր հայոց բանակի ժամանումը, կազմակերպում էր ինքնապաշտպանութիւն, ապա Ղարաքիլիսայում զօրքը եւ ժողովուրդը գլուխը կորցրած փախչում էին: Ուստի, ինչպէս վկայում են գրեթէ բոլոր ականատեսները, իսկական հրաշք էր, որ այդ անյուսալի պայմաններում զօրքն ու ժողովուրդը ճակատում տարան յաղթանակներ:

«Յուսալքումը տեղի տուեց ոգեւորութեան. Մայիսի 24-ին... Ղարաքիլիսայի մօտ... թուրքերը շարդուած՝ խուճապով քաշուեցին դէպի Համամլու... Մայիսի 25-ին եւ 26-ին... տեղի ունեցան յամառ եւ արիւնալի ճակատամարտեր... Ղարաքիլիսայի ճակատամարտում հայ զինուորը երեւան բերեց ռազմական

բարձր կարողութիւն եւ անսահման հայրենասիրութիւն»<sup>30</sup>:

Թագմածակատի հրամանատար Թ. Նազարբեկեանը եւս, որը երկու օր առաջ Հայոց Ազգային խորհրդին ուղղած վերոյիշեալ զեկուցագրում անհնար էր համարում դիմադրութիւնը, շեշտում է ռազմիկների հոգեփոխութիւնը՝ վկայելով, որ մայիսի 24-ին տեղի ունեցաւ «Զինուորների ու սպաների տրամադրութիւնների կտրուկ փոփոխութիւն, ոգու համընդհանուր բարձրացում. Ղարաքիլիսայի զօրախումբը անցաւ յարձակման... մայիսի 26-ին Մայմեխի մօտ... թուրքերը փախչում էին»<sup>31</sup>:

«...Մայիսի 24-ին, մի անսպասելի դէպք, աւելի շուտ մի զարմանալի հրաշք եկաւ ցրելու համատարած լուրերը, եւ պատուեց մահուամբ վարագոյրը եւ մարդկանց երակների մէջ խօսեց ապրելու եւ կռուելու տենչը: Ղարաքիլիսայից դէպի արեւելք Դիլիջանի ոլորապտոյտ ճապարակները երեւաց մի անորոշ զանգուած, որ քանի մօտենում, աւելի եւ աւելի նկատելի էր դառնում: Շատ չանցած գիւղում երեւացին մի խումբ ձիաւորներ, ոտքից գլուխ զինուած: Ժողովրդի սարսափահար դէմքերին նկատուեց ե՛ւ զարմանքի ե՛ւ ուրախութեան նշան... Եկուորները ծանօթ դէմքեր էին. Նժդեհի տղերքը:

- Գալիս է հայ զօրքը, գալիս են հայ կամաւորները: Կռիւ պիտի տանք, փախչելն ամօթ ա, տղամարդկութիւն պիտ շանց տանք- արար աշխարհ պիտ զարմացնենք- ծլկող ու կորչողը- նամարդ է:

Լսողները չէին հաւատում իրենց ականջին. Ամենքին թւում էր մի երազ, մի քաղցր ու կարճատեւ երազ...<sup>32</sup>:

Ի՞նչ էր պատահել, ինչպէ՞ս եւ ի՞նչ պայմաններում է կատարւում այդ իրօք

որ, հրաշքը:  
 Առաջինն այն էր, որ մայիսի 24-ին, երբ բարձրագոյն հրամանատարութեան պահանջով Դիլիջանում գումարուած զինուորական եւ աշխարհիկ ղեկավարութիւնը քննարկման էր դրել անխուսափելի անհաճը լաւագոյնս կազմակերպելու հարցը, ստացում է Սարգարապատի մատոյցներում մեր զօրքերի տարած մայիսի 22-ի լուրը, որը կայծակի արայաղթանակի լուրը, որը կայծակի արագութեամբ տարածուում է: Սա մեծ ոգեւորութիւն է առաջացնում յուսահատ զանրութիւն մէջ. «Հրաշք էր պէտք մէջքը գուճանների մէջ. «Հրաշք էր պէտք մէջքը կոտրած բանակը ոտքի հանելու համար, զորում է Ա. Ահարոնեանը,- Եւ հրաշքը կատարուեց: Մայիսի 24-ն էր. Երեւանից մի հեռագիր հասաւ հետեւեալ բովանդատի հետեւեալ հասաւ հետեւեալ Դրոն իր կութեամբ.- Բաշ Աբարանում Դրոն իր փոքրաթիւ զնդով ջարդել է թուրքերին եւ հետապնդում է ցաք ու ցրիւ փախչող թշնամուն: Զօրավար Սիլիկեանի գլխաւոր ղեկավարութեան տակ գործող զօրուոր ղեկավարութեան տակ գործող զօր. փրկման Սարգարապատում ճակատում է եւ թուրքերին սաստկօրէն նեղն է դրել յաղթանակի մեծ հաւատով...»

Յուսակտուր ու վեհերոտ դասալիքների ճամբարներին յայտնւում էր ծերունի զօրավար Ղամազեանը,- շարունակում է Ա. Ահարոնեանը,- մէկ տեղ սայլերի առջեւ փակելով, ուրիշ տեղ ձիաւորի ձիու սանձը բռնելով՝ կանգնեցնում էր խուսափող զինուորներին եւ հաւար էր խուսափող զինուորներին եւ հաւար էր ձգում աղաչանքով, բարկութիւնով, սպառնալիքով. «Ձեր տունը քանդուի, սպառնալիքով. կոչում էր նա,- ո՞ր էք անխելքներ,- կոչում էր նա,- ո՞ր էք անխելքներ,- ո՞ր էք փախչում. Ձեր փրկութիւնը, ո՞ր էք փախչում է: Չլսեցի՞ք, որ նր միայն կռուի մէջ է: Սարգարապատի մէջ պարտուած է Սարգարապատում, Բաշ Ապարանում: Ինչո՞ւ այստեղ տում, Բաշ Ապարանում: Ինչո՞ւ այստեղ էլ չպիտի պարտուի...»

Եւ իր այս փոքրաթիւ զօրքը հայ հրամանատարը [Նազարբեկեանը] դասա-



















հրամանը: Սկսուեց յարձակումը: Վրէժով բեռնաւոր մեր մարտիկները կը յարձակուէին վագրերի նման: Մեր զարկերի զօրութիւնից շատերի սուինները ծուռեցին, փշրուեցին:

Կռիւ էր, որ որքան տարերային, այնքան կարճատեւ եղաւ: Թշնամին տազնապով դէպի Արջուտ կը փախէր: Նա ժամանակ չունեցաւ անգամ իր վերաւորներին փրկելու: Մենք կը շարունակէինք մեր տակտիկական ճաշակը: Հայ մարտիկն այդ օրը, այդ ժամին, արժանի էր իր ցեղի անունին:

Ճակատամարտի առաջին օրը սկսուել էր՝ Հայ ոգու փայլուն գերազանցութեամբ՝ յաղթանակով: Այլ եւս կար համոզումը, թէ պիտի յաջողենք աւելի մեծ քայլով Ղարաքիլիսէում կրկնելու Սարդարապատը եւ տալ Երեւանին իր ուզած երեք օրը՝ Բաթումի մեր պատգամաւորութեան գործը հեշտացնելու համար:

Այդ օրը մայիս 25-ն էր:

Ճակատամարտի երկրորդ օրը նոյնպէս սկսուեց եւ պսակուեց մեր յաջողութեամբ: Հայ շինականի արիւթիւնը լիոնիդասեան կիրճի կը վերածէր Ղարաքիլիսէին: Մայիս 27-ի գիշերը լուսացրինք երկու գիշերամարտերով եւ համբուրելի մնաց Հայ Ձէնքը:

Մեծ ճակատամարտի վերջին արարը այլեւս սովորական բախում էր, այլ մահակոխ:

Մայիս 28 էր՝ Սրբազնասուրբ եւ տօնելի՛ օր: Այդ օրը Տիգրիսի մէջ Հայոց Ազգային Խորհրդի կողմից տեղի պիտի ունենար Հ. Հանրապետութեան հռչակումը, իսկ Բաթումում պիտի կնքուէր հաշտութեան դաշինքը:

Այսպէսով, կ'իրականանար դարաւոր երազը-Հայ Արիւնով սրբուած Արարատեան դաշտում կը վերականգնուէր Հայ Հայրենիքը, որի մէջ յար եւ յաւէտ պի-

տի ապրին արիւթիւնն ու փառքը, Սարդարապատի եւ Ղարաքիլիսէի հերոսականը կերտող ռազմիկները»<sup>61</sup>:

Մեկնելով վկայաբերուած աղբիւրներէ՛ կարող ենք անել հետեւեալ եզրակացութիւնը.

Առաջին. մայիսի 24-ից 26-ը Ղարաքիլիսայում թուրքերի դէմ հայ զօրքի յաղթանակը վճռական էր, քանի որ այդ նոյն ժամանակ Սարդարապատում հայերը անհրաժեշտ չափով չէին կարողացել զարգացնել յաջողութիւնը, իսկ թուրքերին յաջողուել էր մայիսի 22-ի պարտութիւնից յետոյ ուշքի գալ եւ վերադասաւորելով ուժերը, վերականգնել մարտունակութիւնը: Հետեւաբար անժխտելի է այն իրողութիւնը, որ եթէ Կարսից ու Ալեքսանդրապոլից յաղթանակներով դէպի Երեւան արշաւող թուրքերը 1918 թ. մայիսի 24-27-ին Ղարաքիլիսայում դիմադրութեան չհանդիպէին, ապա Սարդարապատի, նաեւ Ապարանի մայիսի 25-27-ի վերջնական յաղթանակները չէին լինի, քանի որ Դիլիջանից, Ապարանից ու Սարդարապատից թուրքերի անկասելի մուտքը Ս. էջմիածին ու Երեւան կը դառնար անխուսափելի... Ուստի, իրօք որ. «Պիտի խոստովանել, որ առանց Ղարաքիլիսէի ճակատամարտի ոչ թէ օրուայ իս. Հայաստանը, այլ եւ այդ երկրամասի վրայ այսօր ապրող հայութիւն չէին ունենայ: Ղարաքիլիսէի ետօրեայ հերոսականը փրկեց գլխովին ոչնչացումից Արարատեան հայութիւնը եւ հիմը որեց Հայկական պետութեան»:

Երկրորդ՝ Ղարաքիլիսայի ճակատամարտի նախօրէին զօրքի մէջ բացակայող կարգապահութիւնը, հրամանատար-զինուոր, ենթակայ-ստորադաս բնականոն յարաբերութիւնները եւ ճակատելու ոգին ու կարողութիւնը Գարեգին Նժդեհ'ը վերականգնեց ո՛չ թէ ճակատի հրամանատարութիւնը: Զլինէր Նժդեհ'ը, զօրքն ու

աշխարհագրորդ թշնամու դէմ չէին կռուելու, ինչպէս չկռուեցին Էրզրումում, Կարսում եւ Ալեքսանդրապոլում...

Հետեւաբար մենք պէտք է հաւատանք ժամանակի այն պետական ու ռազմական խոշոր գործիչներին ու յատկապէս դէպքերի մասնակիցներին, որոնց մէջ նաեւ Նժդեհ'ին, որոնք միաբերան ու անվերապահ պնդում են երկու իրողութիւն. առաջին՝ որ Ղարաքիլիսայի ճակատամարտը եղել է մայիսեան հերոսամարտերից առանցքայինը: Երկրորդ՝ ճակատից խուճապահար փախչող ժողովրդին ու անձնատուր լինելու տրամադրուած զինուորականներին ոգեւորել, հոգեփոխել, կազմակերպել, այն է՝ ճակատամարտ տալու նախաձեռնութիւնը իր վրայ վերցնելով՝ յուսալքուած հրամանատարութեանը չենթարկող հայոց զօրքին հեղինակագործի հրամանատարութեանը վերանթարկելով՝ յաղթական կռուի է տարել Գարեգին Նժդեհ'ը:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- Կ. Սասունի, Թրքահայաստանը Ա աշխարհամարտի ընթացքին (1914-1918), Պէտրոպ, 1966, էջ 205-206 (ընդգծումն իմն է - Ռ. Հ.):
- Հր. Աւետիսեան, Հայոց ազգային միասնութեան յաղթանակը, Երեւան, 1988, էջ 84-86, 21. Ա. Յարութիւնեան, Թուրքական ինտերվէնցիան Անդրկովկաս 1918 թ. եւ ինքնապաշտպանական կռիւները, Երեւան, 1984, էջ 174-175:
- Ա. Յարութիւնեան, Թուրքական ինտերվէնցիան Անդրկովկաս 1918 թ. եւ ինքնապաշտպանական կռիւները, էջ 174-175:
- Հր. Աւետիսեան, Հայոց ազգային միասնութեան եւ անկուսակցական վկայութիւնը, «Հայկական բանակ», 1998, թիւ 2 (16), էջ 17:
- Ծակատամարտ ֆրանկո-անգլիական եւ գերմանական զօրքերի միջեւ ֆրանսիական Մարն (Մարն) գետի մօտ 1914 թ. սեպտեմբերի 5-12-ը: Ծակատամարտի երկու կողմերից մասնակցող ֆրանկո-անգլիական բանակների յաղթանակը վճռեց առաջին աշխարհամարտի ճակատագիրը յօգուտ Անտանտայի, Ֆրանսիան ազատուց գերմանական գրաւումից:
- Աւետիս Ահարոնեան, Երկերի ժողովածոյ, 10 հատորով, հտ. Երեւան, Թեհրան, 1983, էջ 429-430, «Անդրանիկ» յուշագրութիւնից:
- Ա. Ահարոնեան, Աւարայրի ոգեկոչումը, «Հայ-

- րենիք», 1931, թիւ 2, էջ 78:
- Աւարայրի ոգեկոչումը, «Հայրենիք», 1932, թիւ (112), էջ 95:
- «Հայրենիք», 1932, թիւ 3, էջ 90:
- Տէր Անդրանիկ Օգանեան, Անդրանիկը կը խօսի, Փարիզ, 1921:
- «Հայրենիք», 1932, թիւ 3, էջ 98-99:
- «Հայրենիք», 1932, թիւ 3, էջ 99:
- Յովհ. Քաջազնունի, Դաշնակցութիւնը անելիք չունի այնպէս, Վիեննա, 1923. տե՛ս շարադրանքի 17-րդ կէտը. Սուրբ Արեւիկեան, Մի որոտազ Ղարաքիլիսէի ճակատամարտից, «Հայրենիք», 1920, Պոսթըն, բացատիկ, էջ 26. Զօրավար Գ. Ղարաբեկեան, Հայերու մասնակցութիւնը համաշխարհային պատերազմին կովկասեան ռազմաճակատին վրայ, «Հայրենիք», 1928, թիւ 3, էջ 144. մարտ, թիւ 5, էջ 126. Սարգ. Մեծ հերոսամարտը, «Աշխատար», Հ.Յ.Գ. վրաստանի կեդրոնական կոմիտէի պաշտօնաթերթ, 1919, թիւ 105, էջ 2-3 եւ այլն:
- Турция в годы первой мировой войны, Москва, 1966, էջ 188:
- Ա. Յարութիւնեան, Աշխ., էջ 178:
- Ա. Յարութիւնեան, Աշխ., էջ 188:
- Աւետիս Ահարոնեան, Աւարայրի ոգեկոչումը, «Հայրենիք», 1932, թիւ 3 (111), էջ 96. Լիւտենդորֆ, Յիշողութիւններ, էջ 287-297, հտ. Բ:
- Եթէ նկատի ունենանք, որ 1918 թ. վերջին Հայաստանի առաջին հանրապետութիւնում ապրում էր մօտ մէկ միլիոն երկու հարիւր հազար մարդ (չհաշուած գաղթականութիւնը), որոնցից հայեր՝ 700 հազար, մօտ կէս միլիոն էլ կովկասի թաթար, ապա պարզ կդատնայ, որ այդ ճակատագրական օրերին Ղարաքիլիսայ էր հաւատարմական օրերին Ղարաքիլիսայ էր հաւատարմական յիշուել իրօք որ ապագայ Հայաստանի Հանրապետութեան հայութեան մեծ մասը:
- Յ. Իրազեկ, Մօտիկ անցեալից, պատմական դէպքեր եւ ապրումներ, 1917-1922, Պէտրոպ, 1956, էջ 29. Լեօ, Անցեալից, Թիֆլիս, 1925, էջ 399:
- Մ[ուշեղ] Ղ[ազարեան], Ղարաքիլիսայի հերոսամարտը, Թիֆլիս, 1920, էջ 5-13, 14-16:
- «Հայրենիք», 1951, թիւ 8 (307), էջ 71:
- «Իրազեկ», Մոֆիա, 1943, թիւ 107, էջ 3:
- Մեսրոպ արքեպիսկոպոս Տէր-Մովսիսեան (1865-1939), Մնուել է Գորիսի Օիկահող գիւղում, աւարտել է Օուշու թեմական եւ Թիֆլիսի Ներսիսեան դպրոցները, 1891 թ.՝ Դորպատի Ներսիսեան դպրոցում էլ էլ արեղա, համալսարանը, 1893 թ. ձեռնադրուել է արեղա, համալսարանը, 1908 թ. ստապա մէկ ամիս անց՝ վարդապետ, 1908 թ. ստապա մէկ ամիս անց՝ վարդապետ գաւազան, 1903 թ. Աշխատեց է եպիսկոպոսական գաւազան, 1903 թ. Աշխատեց է «Արարատ» ամսագրի խմբագիր, Անկուել է բոլշեպիկեան ահաբեկչութիւնների դարձել է բոլշեպիկեան ահաբեկչութիւնների գոհ, թաղուել վարդապետապետի Ս. Գայիանէ եկեղեցու թաղում (Գ. Տէր-Վարդանեան, Մեսկեղեցու թաղում (Գ. Տէր-Վարդանեան, Երեւան, 1999, թիւ արքեպ. Տէր-Մովսիսեան, Երեւան, 1999, էջ 8-12, 64), Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդին կից գաղթականութեանն օգնող արտա-

կարգ յանձնաժողովի նախագահ:

24 Յ. Թորքեան, *Սարդարապատի հերոսամարտը*, Երևան, 1969, էջ 175:

25 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1992, թիւ 3, էջ 141:

26 ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, Ա-21, էջ 38-42. հմմտ. Սարդարապատ, Բաշ-Ապարան, Ղարաքիլիսա՝ 1918 թ. մայիսեան հերոսամարտերը, Երևան, 1998, էջ 18-19:

27 ՀՀ ՊԿՊԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, Գ-21, թերթ 77 եւ հակառակ էջը. հմմտ. Սարդարապատ, Բաշ-Ապարան, Ղարաքիլիսա՝ 1918 թ. մայիսեան հերոսամարտերը, Երևան, 1998, էջ 40-41:

28 Յ. Իրազեկ, *Մօտիկ անցեալից. պատմական դէպքեր եւ ապրումներ 1917-1922*, Պէյրուք, 1956, էջ 31-32. Հր. Աւետիսեան, *Գ. աշխ.*, էջ 251:

29 Մ[անուկ] Ղ[ազարեան], *Ղարաքիլիսայի հերոսամարտը*. էջ 16-17: 72

30 Սիմոն Վրացեան, *Հայաստանի Հանրապետութիւն*, Փարիզ, 1928, էջ 96-97:

31 *Զօրավար Թ. Նազարեկեանի յուշերը (ոռութեան)*, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1992, թիւ 3, էջ 143-144:

32 Մ[ուշեղ] Ղ[ազարեան], *Ղարաքիլիսայի հերոսամարտը*, Թիֆլիս, 1920, էջ 13:

33 Աւետիս Ահարոնեան, Աւարայրի ռզնկոչումը, «Հսկանիք», 1932, թիւ 3 (111), էջ 81, 83-84:

34 Ծնունդ է 1861 թ. Ծիրակի գաւառի Պեմզաշէն գիւղում, աւարտել է Հատիճի վանքի դպրոցը, ապա՝ Ս. Էջմիածնի Գեորգեան ճեմարանը: Երբ 1918 թ. մայիսի 21-23-ը թուրքերը մի շարք բնակավայրերի հետ միասին գրաւեցին նաեւ Սպիտակը: Տէր Կոմիտասը Դարբաս գիւղի եկեղեցիների զանգերի դողանքներով գիւղացիներին ոտքի հանեց ինքնապաշտպանութեան: Երեք օր շարունակ Կոմիտաս քահանայի ջոկատը, որին միացել էին նաեւ շրջակայ գիւղերի բնակիչներ, կոտում էր թուրքերի դէմ՝ հրաշքներ գործելով: Մահացել է 1928 թ. իր ծննդավայր Պեմզաշէնում, որտեղի քահանան էր: Տե՛ս Սերժ Աֆանասեան, Սարդարապատի յաղթանակը, Երևան, 1991, էջ 60. Միհրան Մուրադեան, «Ուրբաթ», 1991, թիւ 18, էջ 4:

35 Սերժ Աֆանասեան, *Սարդարապատի յաղթանակը*, Երևան, 1991, էջ 63:

36 Գ. Տէր-Մովսիսեանը (Մոսէտով, Մովսիսեան) ախայքալակցի էր, «Լեռնային» կոչւող 4-րդ հրետանային մարտկոցի հրամանատարը, որը յուսահատ բազմութիւններին դէպի ճակատ մղող եզակի սպաներից մէկն էր (սե՛ս յաջորդ էջերը): Սկսած 1914 թ., մասնակցելով տարբեր կոնիւնտրի՝ արժանացել է սպայական բոլոր պարգևներին, երեք անգամ վիրաւորուել: 1918 թ. մայիսի 25-ին ադիւմամարտ տալով թուրք զօրքերի դէմ, զոհուեց Դարբաս գիւղի մօտերքում գտնուող թիւ 750 բարձունքը գրաւելիս, որը վճռական ճշակութիւն ունեցաւ մեր զօրքերի մայիսի 25-ի

ընդհանուր յաղթանակի գործում: Ճաւօք, իր մասին այլ տուեալներ չունենք: Նրա գլխաւորած հրետանային մարտկոցի երկրորդ դասակի հրամանատար Պետրոս Պետրոսեանցի (Պետրոս Տէր-Պետրոսեանց, որը հրամանատարի զոհուելուց լետոյ փոխարինել է նրան) մի զեկուցագրից յայտն էի է, որ ճակատամարտից լետոյ, նրա մարտկոցի ռազմիկները իրենց քաջ ու նահատակ հրամանատարի մարմինը մայիսի 28-ին, թշնամու զօրամասերից շրջապատուած լինելու պայմաններում, հասցնում են Դիլիջան եւ ամփոփում տեղի Ս. Աստուածածին եկեղեցու բակում: Ղարաքիլիսայի ճակատամարտի բոլոր մասնիակիցներն անխտիր, որոնց թում նաեւ մարաշախտ Յովհաննէս Բաղդասեանը, միաբերան վկայում են, որ Գուրգէն Տէր-Մովսիսեանը անզուգական հերոս եւ մեծ հայրենաւեր անհատականութիւն էր: Մ[ուշեղ] Ղ[ազարեան], *Ղարաքիլիսայի հերոսամարտը*, Թիֆլիս, 1920, «Մշակ», 1918. Յ. Թորքեան, *Սարդարապատի հերոսամարտը*, Երևան, 1969, էջ 171. Կոնստանդին Բագրատեան, *Գօղթ, պօղվիզի, սուղթը*, Կիւն, 1998. Աւետիս Ահարոնեան, *Աւարայրի ռզնկոչումը*, «Հայրենիք», 1932, թիւ 3 (111). Ա. Յարութիւնեան, *Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ. եւ ինքնապաշտպանական կոնիւնտրը*, Երևան, 1984, էջ 194. Գ. Ղարիբջանեան, Մայիսեան հերոսամարտերի արձագանգները, «Հայկական բանակ», 1998, թիւ 2 (16), էջ 69. Հր. Աւետիսեան, Հայոց ազգային միասնութեան յաղթանակը, էջ 84-86, 109-111, 202-203, 214-217 եւ այլն:

37 Աւօ, *Գարեգին Նժդեհ*, Պէյրուք, 1968, էջ 473:

38 Մկրտիչ Այվազեան, *Ղարաքիլիսայի ճակատամարտը բացառիկ էր (յուշեր)*, «Հայաստանի Հանրապետութիւն», 2001:

39 Յ. Իրազեկ, *Մօտիկ անցեալից. պատմական դէպքեր եւ ապրումներ*, 1917-1922, Պէյրուք, 1956, էջ 31-32:

40 Երբ զօրավար Սիլիկեանը մայիսի 22-ին Սարդարապատը գրաւած թուրքական զօրքի դէմ առաջին յաղթանակը տարաւ եւ նրան պարտադրեց 15-20 կմ փախչել, մայիսի 24-ին թուրքերը վերադասատրելով ուժերը ամեն գնով ձգտում էին վերանուսճել զիջած դիրքերը եւ դա նրանց գրեթէ յաջողում էր: Ահա այդ վճռական պահին եթէ թշնամուն յաջողուէր Ղարաքիլիսայից յաղթարշաւով մօտենալ Երեւանին, Սարդարապատի ճակատամարտի ելքը ուրիշ պիտի լինէր: Ահա այդ նկատառումներով էր Արամը պահանջում գոնէ «երեք օր դիմանալ»:

41 ՀՅ Դաշնակցութեան Բոստոնի Կեդրոնական դիւան, դատական գործ, էջ 401-403, տպագրուել է՝ Ա. Յարութիւնեան, *Գարեգին Նժդեհի* 1921 թ. Թաւրիզի դատավարութիւնը, Երևան, 2001, էջ 112. «Ռազմիկ», 1943, թիւ 107, էջ 3:

42 «Ռազմիկ», 1943, թիւ 107, էջ 3:

43 Ծնէտը Ալեքսանդր, *Սարդարապատի հերոսա-*

*մարտը*, Ֆրեզո, 1967, Ա. Ամուրեանի առաջաբանը, էջ 44:

44 Սերգէյ Թորոսեան, *Հայ-թրքական պատերազմի օրերին*, «Հայրենիք», 1951, թիւ 8 (307), էջ 72-73:

45 «Յուսաբեր» օրաթերթ, Կահիրէ, 1957, օգոստոսի 15:

46 Աւօ, *Նժդեհ*, Պէյրուք, 1968, էջ 67, 468:

47 Հայկ Ասատրեան, *Հայաստան - Արիական նահադիռք Առաջաւոր Ասիայում*. տե՛ս նաեւ՝ «Ռազմիկ», 1943:

48 Վահէ Արծրունի, *Հայ-տանկական պատերազմը. Հայ սպայութիւնը*: Ծատախ, Երևան, 2002, էջ 362-365:

49 ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գ. 79, էջ 20. հմմտ. Հր. Աւետիսեան, *Գ. աշխ.*, էջ 213:

50 Ձեռագիրը մեզ տրամադրեց հանգուցեալ Ամիրբեկեանի տիկին Լիլիկ Ամիրբեկեանը: Նա աւագ, որ գրաքննչութիւնն այդ ճառը կրճատել հանել է իր ամուսնու «Վերջին հողակտորի վրայ» երկհատոր վէպի (Երևան, 1973 թ.) շարադրանքից:

51 Մ[ուշեղ] Ղ[ազարեան], *Ղարաքիլիսայի հերոսամարտը*, Թիֆլիս, 1920, էջ 16-17

52 «Ռազմիկ», 1943, թիւ 107, էջ 3:

53 Հայկ Ասատրեան, *Հայաստան - Արիական նահա-*

*դիռք Առաջաւոր Ասիայում*, տե՛ս նաեւ՝ «Ռազմիկ» թերթ, 1943, թիւ 107, էջ 3:

54 Սերգէյ Թորոսեան, *Ղարաքիլիսայի ճակատամարտը*, «Հայրենիք», 1951, թիւ 9 (308), էջ 55:

55 Աւետիս Ահարոնեան, *Աւարայրի ռզնկոչումը*, «Հայրենիք», 1932, թիւ 3 (111), էջ 91-92, 96, 100-101:

56 ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 121, ց. 1, գործ 79, էջ 20-21. հմմտ. Հր. Աւետիսեան, Հայոց ազգային միասնութեան յաղթանակը, Երևան, 1988, էջ 201-202: Փաստաթղթի կրճատ տարբերակը տպագրուել է՝ Սարդարապատ, Բաշ-Ապարան, Ղարաքիլիսա՝ 1918 թ. մայիսեան հերոսամարտերը, Երևան, 1998, էջ 73:

57 **Константин Баграмян, Годы, подвиги, судьбы**, Киёв, 1998, էջ 37:

58 Յ. Իրազեկ, *Մօտիկ անցեալից. պատմական դէպքեր եւ ապրումներ*, 1917-1922, Պէյրուք, 1956, էջ 31-32:

59 **Константин Баграмян, Годы, подвиги, судьбы**, Киёв, 1998, էջ 37, 41-42, 44-45, 48:

60 «Ազատ խօսք», Սոֆիա, 1935, էջ 2. «Ռազմիկ», 1939, թիւ 121. արտատպուած է՝ Գ. Նժդեհ, Երկեր, հտ. 2, Երևան, 2002, էջ 272:

61 Նոյն տեղում: